


արիւնը խիստ առատ վազելով չգադրի, պէտք է վիրաբոյժ կանչել: Բայց հասարակ վերքերու ատեն՝ կամ գէթ ինչուան որ բժիշկը հասնի, պէտք է բրդեղէնի կտոր մը պաղ ջրի մէջ թաթխել ու վերքին վրայ դնել, որով մէկէն կը զովանայ վերքը. և քանի որ ան լաթը տաքնայ՝ նորէն պէտք է պաղ ջրին մէջ թաթխել ու դնել վերքին վրայ: Իսկ թէ որ մէկուն ձեռքը կամ մատը կամ ոտքը ճգմուի կամ ուռի, ջրին մէջ քիչ մը քացախ կամ աղ ալ կրնայ խառնուիլ, որ ուժը աւելի ըլլայ: Երբոր մէկուն թեւը կամ

ոտքը կամ ոտը և իցէ ոսկորը դիպուածով մը կտորի կամ խախտի՝ մէկէն պէտք է վիրաբոյժ կանչել. բայց որ պէս զի ան միջոցին վերքը կամ ուռեցքը կամ թէ կտրուած տեղը բորբոքումն չպատճառէ, շատ աղէկ կ'ըլլայ պաղ ջրով թրջել ատեն ատեն. անով տաքութիւնը կը զովանայ, ցանալ կը մեղմանայ: Եւ մանապէս երբոր տղոց ձեռուքները, ոտուքները ձմեռ ատեն կը ճաթըռտին ու ձմեռնակ կ'ըլլան, գաղջ ջրով թրջելը խիստ աղէկ է. վասն զի եռքը անով կը դադրի, ու վերքը չզայրանար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՀԱՆՈՍՈՒԹԻՒՆ



Երկրագործի կոչումը:


Երկրագործի վերի կոչմանը, Ստուրին՝ Երկրագործի քառաւոր, ուր որ հիմա խեղճ Երկրագործներ կը բնակին ողորմելի գեղերու մէջ, այնպիսի

մեծագործ հին շէնքեր կան որ տեսնողին միտքը կը յափշտակուի, ու ան մեծագործութեանց վրայ նայելու ատեն ինքզինքը երկու իրեք հազար

տարի առաջ կը կարծէ՝ բիւրաւոր
գործունեայ մարդիկներու մէջ, ու
զօրաւոր թագաւորներու՝ աշխարհա-
կալներու մէջ: Այսպիսի շինուածք-
ներուն մէջ ալ ամենէն փառահեղն
ու զարմանալին կը համարուի Ապ-
սամպօլ կամ Իփսամպօլ ըսուած
գեղին քովի մեծ կռատունը, որ ըս-
քանչեւ ճարտարութեամբ ապառաժ
լեռան մէջ փորուած է: Ամենուն
կարծիքն ալ ան է թէ աս կռատունը
շինողը Ագիպտոսի հռչակաւոր Սե-
սոստր թագաւորը եղած է, որ հը-
ռամէս Գ ալ կ'ըսուի. և որովհետեւ
նոյն լեռան մէկալ կողմն ալ ուրիշ
կռատուն մը փորած է՝ առջինէն քիչ
պզտիկ, ան ալ Սեսոստրի թագուհին
շիներ է կ'ըսեն: Սեսոստր ինը տարի

Ասիա ու Աֆրիկէ պատերազմներ ու
յաղթութիւններ ընելէն ետքը Ա-
գիպտոս դարձած ատենը, իր թա-
գուհին ինչուան աս լեռան քովը զին-
քը դիմաւորելու եկած կ'ըլլայ, և
աս բանիս յիշատակն ան երկու կռա-
տունները հոն կանգնած կ'ըլլան:

Սեծ կռատան դրսի ճակատը շատ
գեղեցիկ տեսք ունի. դրան երկու
դին երկերկու հատ հսկայաձև արձան
ներ նստած են՝ նոյն ապառաժին մէջ
փորուած, ամէն մէկուն բարձրու-
թիւնը 61 ոտնաչափ. չորսն ալ Սե-
սոստրին արձաններն են՝ իրարու նը-
ման: Վրանը վրայ Փրէ չնոյն ար-
ձանը փորած է, որ արեն է, և կռա-
տունը անոր նուիրած կ'երենայ:
Շէնքին ներսի կողմը երկայն գա-



ւիթ կամ բակ մըն է. անկէ ընդար-
ձակ սիւնաղարդ սրահ մը կը մտնես,
ու ան սրահին ներսի ծայրն է բուն
մեհեանը, հոն իրեք հատ արձան
կայ, այսինքն Ամոն կուռքը, Փրէ
աստուածը, և Սեսոստր: Սիւնա-
ղարդ սրահին երկու կողմը չորս չորս
սիւն կայ, ամէն մէկ սեան առջևը
մէյմէկ ահագին արձաններ կեցած՝
քսանական ոտնաչափ բարձրութիւն:

աս արձաններն ալ Սեսոստրի կերպա-
րանքը կ'երեւցնեն:

Կռատան բոլոր պատերն ալ շատ
գեղեցիկ բարձրաքանդակ ու գունա-
ւոր պատկերներով զարդարուած են.
և պատկերներուն նիւթերը՝ Սեսոս-
տրին ըրած յաղթութիւններն են, և
թէ ինչպէս Սեսոստր ան յաղթու-
թիւնները աստուածներուն կ'ընծայէ:
Իրեն պատերազմները ցուցնող փո-



րուածքներուն մէկը այնպէս ձեւացուցած է որ ինքը Սեսոստր երկձի կառքով բերդի մը վրայ կը վազէ, ու բերդին մէջի մարդիկները իր նետերովը կը զարնէ . բերդը ժայռի մը վրայ է, ու մարդիկը յաղթուած կ'երենան . մէկն ալ դաշտին վրայ զարհուրած կը փախչի եզներովը, որով կ'իմացուի թէ ան երկրի բնակիչները հովիւ են եղեր : Թագաւորին գլխուն վրայ անգղ մը կը թռչտի՝ յաղթութեան նշան . իսկ քովի արձանագրութեանէն այսչափ հասկըցած կ'երենան հնագէտները՝ թէ ան յաղթուող ժողովուրդը Սաֆէն կ'ըսուի ու Սիւլագետաց կողմերը բնակող ազգ մըն է եղեր : Բաւական հաւանականութիւն կայ կարծելու թէ աս ժողովուրդը մեր հայոց ազգն ըլլայ, որուն Լէֆն անունը ծանօթ էր օտար ազգաց, և ան բերդը Սանայ բերդն ըլլայ : Նոյնը է մեզի յիշուած մեր Փառնակ հայկազն նահապետին յաղթուելուն յիշատակը աս կերպով մնացած կարծել՝ Նուպիայի անապատին մէջ . բայց որովհետեւ Սեսոստրի պէս աշխարհակալի մը գրեթէ բոլոր Լսիային առ ժամանակ մը տիրապետելը Երոզոտոսի ու Գիոգորի պատմութիւններէն յայտնի է, մեր ազգասի-

րութիւնը աս նիւթիս մէջ ալ կրնայ միաբանիլ ճշմարտասիրութե հետ :

Պզտի կռատունն ալ քիչ հեռու է մեծէն . և ասոր ճակատը վեց հատ գեղեցիկ հսկայաձեւ արձաններ կան ոտքի վրայ . չորսը նոյն Սեսոստրի արձաններն են, երկուքը իրեն Նոֆրէ-Լէի անունով թագուհիինը, և նուրիւրած է Լէթիր ըսուած չաստուածուհւոյն՝ որ Նոֆիպտացւոց Լստղին է եղեր :

Հոս դրուած պատկերներուն առջինը կռատուններուն դրսի տեսքն է, երկրորդը ներսինն է, երրորդը պատին վրայ եղած բարձր քանդակներուն մէկն է որ ստորագրեցինք :

Հնագէտ Ճանապարհորդը կամ հնասէր կարգացողը այսպիսի հոյակապ հնութիւններ տեսած ատենը ինչ տխուր՝ բայց անուշ մտածութիւններու մէջ որ կ'ընկղմի, ամենուն յայտնի է : Լսպիսի մտածութեանց օրինակ ըլլայ Սոլնէյ անունով գաղղիացի Ճանապարհորդին գրածը Պալմի-

1 Աս երկու կռատուններուն ալ տեղն 'ի տեղը ստորագրող եւրոպացի Ճանապարհորդներն են Տրովէթի, Պուրջարթ, Պելցոնի, Ռիքարտսոն, Ռիֆոյ, Կոյ, Շամիուլիոն, Ռոզէլլինի և այլն : Մենք աւստորագրութիւնը Ռոզէլլինիէն քաղեցինք :

րա՝ քաղաքին աւերակներուն վրայ,
որ ընտիր մատենագրութեան ալ սի-
րուն օրինակ է :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ՎԵՐԱՅ ԱՒԵՐԱԿԱՅ ՊԱԼԱՄԻՐԱՅ

Ան ինչ տակաւին 'ի մուտս լեալ էր արեգակն,
և կամար շառագոյն գեռ ևս յայտ առնէր զհետս
ընծացից նորին զբացական լեւամբք երկրին Ասո-
րոց, և տհա լուսին կարակնած և ամբառնայր յա-
րեւելց Է կապուտակօգոցն ասպարէզ 'ի վերոյ գաշ-
տած և գետափանցն Եփրատայ: Անմայ էր երկին, և
օգ հանգարա և խաղաղական. նուազ պայծառու-
թիւն տուրնջեան ամբքէր զարհաւիրա խաւարի, և
գիշերոյն զովութիւն մեղմէր տակաւ զտապ երկրին
բորբոքելոյ. մեկնեալ էին ուղտերամակք 'ի գոմս իւ-
րաքանչիւր, և գոյճն անգամ շարժուան կենդանա-
կան չեւեռէր գերեսօք ամթակէզ անապատին: Լուռի
համատարած պատեալ էր զամենայն, և միայն եր-
բէք երբէք լսել լինէին կռիւք եղերակոնք հառուց
գիշերայնոց և աղուխուց վայրենեաց: Ստուերք
գիշերոյ լծանձրանային տակաւ, և աչք իմ բլա-
ցեալք յաղճամղջին մթութենէն՝ զսեանցն և զըր-
մոց հազիւ նշմարելին զընդ աղօտ կերպարանս:
Վայրեն ամայացեալք, գիշերն խաղաղաւէտ, և
տեսարանն վեմական գերկիւղածութեան իմաս-
տից սոսկումն զին և արկանէին: Տեսիլ անմարգա-
ձայն քաղաքին, յիշատակ ժամանակացն անցելոց,
և առաջիկայս իրաց հանգամանք ընդ նոսրին հա-
մեմատեալ, այս ամենայն առեալ ձգեցին զմիտս
իմ 'ի խորհուրդս մեծամեծս: Հստայ 'ի վերայ սեան
միոյ խորտակելոյ, և զարմուկն յեց 'ի ծունկս ե-
գեալ, և զձեռն 'ի ծնոտի, հայէի ընդ անապատն,
հայէի ընդ աւերակսն, և այլ յայլմէ եղեալ գան-
գաչէր անձն իմ 'ի ցնորս իմն անընկալանս: Ապա-
քէն աստանօր, ասէի ցանձն իմ, աստանօր բար-
գաւաճէր երբեմն քաղաք ճոխ և փարթամ. աս-
տանօր կանգուն կայր ամոռ թագաւորաց մեծագո-
րաց: Այս տեղիք անշէնք, ամբոխ բազմութեան
մարդկան երթեկէր 'ի սոսա. այս որմնափակք անշը-
շունջք, չկահիւն զինուց և ձայնք ուրախութեան
հնչէին 'ի սոսա. և այս գերբոկք սեանց մարմա-
րեայց կուտակեալք՝ ապարանս հոյակապս կաղ-
մէին. և այս սիւնք կործանեալք՝ զարդք էին մե-
ծակաւոյց մեհենեաց. այս հետք ճեմելեաց հրա-
պարակք էին հասարակաց: Եր երբեմն զի անդր
խուռնընթաց ճեպէին միահամուռ ժողովուրդք

առ 'ի հարկանել զպտաշած պարտիս անպաշտու-
թեան, և 'ի պաշտել խնամով զպէտս կենաց
իւրեանց: Ճարտոր արհեստագէտք անդր կու-
տակէին զճոխութիւնս աշխարհաց. անգանօր
լինէին տուրեառիկ փոփոխմունք ծիրանեացն Տիւ-
րոսի ընդ նրբաթել մետաքսից ճենաց աշխարհին.
ասրանիւթ օթոցացն Քաշմիրայ ընդ պշնաղարգ
կապերոցն լիւղացւոց, բազմագունի տկանցն Պալ-
թիականին ընդ մարգարտաց և ընդ ծխանելեաց
աշխարհին Արաբացւոց. և ոսկւոյն Սովիերայ ընդ
թուղեան անագին: Եւ զինչ ինչ մնացեալ իցե-
արդ 'ի քաղաքէն մեծէ. կմոխր և եթ աղետալիք:
Զինչ ինչ նշխարեալ իցե 'ի լայնածաւալ պետու-
թենէն. յիշատակ և եթ աղօտ և սնոտի: Ի կամա-
րակապ գաւիթս սորին, ուր աղմուկը չփոթից
հնչէին անգագար, անգ կալեալ ունի զամենայն
անգործութի մահաւ. զբազմամբոխ հրապարակսն
փոխանակեալ է լուռութիւն գերեզմանոց, և զճո-
խութիւնս վաճառաշահ քաղաքին՝ օղբատուութիւն
քսամենի: Արքունական տպարանք՝ դադարք
լեալ էն գաղանաց, և առ սեմովք տաճարացն մա-
կալին հօտք ոչխարաց, և յալս բնակութեան աս-
տուածոցն որչանան զեռունք զազրաթորմիք: Ո՛վ,
զիմարդ իսւարեցան այնքան փառք և պերճանք:
Ո՛րպէս ճբացան այնչափ վաստակք և աշխատութիք:
Այսպէս ուրեմն 'ի կորուստ գնան ձեռագործք
որդւոց մարդկան: Այսպէս անհետ կորնչին պե-
տութիւնք և աղքէ համօրէն:

Եւ վկայ անցելոց ժամանակաց յայտ յանգի-
ման 'ի միտս իմ՝ նկարէին. զմտու ածէի զամեն
զառաջնս յորս բազմութիւ ազնիք հոյակապք ու-
նէին զվայրսն զայնոսիկ. յուշ ածէի զԱսորեստա-
նեայն զափամբք Արածանոյ. զԲաղդէացին՝ զե-
զերբք Եփրատայ, զՊարսիկն իշխեցող յինգոս գե-
տոյ ցծովն Միջերկրեայ. 'ի համար բերելի զթա-
գաւորութիւնս Դամասկոսի և զԵդոմայ, զԵ-
րուսաղէմի և զԱմմարիայ, զԵռ Փղոսացին և զա-
հախիզիւն փունիկեցի, և ասէի ցանձն իմ. Այս
երկիր Ասորոց, որ արդ թափուր է 'ի բնակչաց,
քաղաքք հարիւրաւորք էին երբեմն 'ի սմա, և գաշ-
տալայրսն այսոքիկ լի էին գեղիւք և աւանք և ա-
գարակօք: Ամենայն ուրեք արտորայք արօրագրեալք,
ամենայն ուրեք երթեկէք ճանապարհաց, և խիտ
առ խիտ բնակութիւնք: Բաբէ, և զի՛ եղեն ա-
ւուրքն այնոքիկ, աւուրք լիութեան և կենաց. զի՛
եղեն այնչափ հրաշակերաք մարգիւղէն ճարտա-
րութեան: Ո՛ւր այն պատենէք Նինուէի, ո՛ւր պա-
րկապ Բաբելոնը, ո՛ւր ապարանք Պերսեպոլեայ,
և մեհեանն Արեգ քաղաքի, և տաճարն Երուսա-
ղէմի: Ո՛ւր իցեն դուամարտակք նաւուցն Տիւրոսի,
և մթերք Արագայ, և գործարանք Սիդոնի. ո՛ւր
խուժան նաւատակաց և նաւապետաց, վաճառա-
կանաց և զորականաց. ո՛ւր մշակքն արօրագիւրք, և
հունձք և հարաւունք, և հօտք ոչխարաց, և միան-
գամայն ամենայն կենդանի զեռուն շորժուն՝ ո-
րովք պանծայր այս երկիր: Աւա՛ղ. տհա յածեալ
չրբեցայ ես ընդ երկիրս ընդ այս աւեր և խաղանա-
ցեալ. տեսի ես զվայրսն յորս հանգիստացան այն-
չափ ճոխութիւնք. և ահա լքուան և միայնու-
թիւն. . . : Ինդրեցի զաղաք վաղեմիս և զարա-
րուածս նոցա, և զհետս նոցին հազիւ նշմարելի
իբրև զհետս անցաւորի որ ընդ փոշի անցեալ իցե:
Տաճարքն կործանեալք, ապարանքն տապալեալք,

1 Պալմիրա քաղաքը Դամասկոսի քովերը հիմա
պզտի գեղ մը մնացած է, որ ատենով Սողոմոնին
լինածն ըլլալով խիտ մեծ ու անուանիք քաղաք էր
Ասորայի մէջ: Ասոր վերջի կործանողը Արեւիկա-
նոս կայսրը եղաւ: Իսկ Վրդէյ իր ճանապարհորդ-
գութիւնն ըրած է ան կողմերը 1783էն ինչուան
1785, և ետքը Գաղղիս մեռած է 1820-ին: Խր
գրուածքներուն ոճը շատ վաղվրդուն ու ճարտա-
սան է. մեզք որ բարոյականը միշտ ազէկ չէ:

նաւահանգիստքն խցեալք, քաղաքք աւերեալք, և երկիրն անբնակ՝ վայր գերեզմանաց : Ո՛վ տէր . և ուստի՞ այսչափ տարօրինակ փոփոխմունք . և զի՞ այսպէս ծայրայեղ անչափութեամբ այլափոխել բաղդի կողմանցս այսոցիկ : Է՞ր վասն այսչափ քաղաքք անկեալք և կործանեալք : Եւ է՞ր աղա-
դաւ նախնին այն ժողովուրդ ոչ ևս կենդանանայ և ոչ ևս աճէ յազգ և ի սերունդ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ամէն պտուղ տախլ է հասուննալէն առաջ .

Ամէն բան անկատար է ժամանակէն առաջ :

ՆՈՂԻՔ կը փափաքին որ իրենց զաւկըները քանի մը օրուան մէջ առաջ գան՝ մարդ ըլլան , իրենց օգնեն , իրենց տեղը բռնեն : Սարժապետները կ'ուզեն որ իրենց աշակերտները քիչ ատենի մէջ շատ բան սորվին , կըթուին , խելօքնան : Դպրաւորները կը բաղձան որ օր մը առաջ իրենց ազգը ծիծաղի , գիտութեամբ և քաղաքականութեամբ զարդարուի , ուրիշ բարեկիրթ ազգաց կարգն անցնի : Սիայն երկրագործն ու պարտիզպանը գիտեն թէ Ամէն պտուղ տախլ է հասուննալէն առաջ . ուրիշները դժուար խելք կը սորվին անկէ , թէ սասնկ ալ Ամէն բան անկատար է՝ ժամանակէն առաջ : Խնձորը աղէկ ու ախորժահամ պտուղ է , բայց քանի որ տհաս է՝ բերան դնելու բան չէ . այսպէս ալ ուսումը , գիտութիւնը , առաքինութիւնը , քաղաքականութիւնը շատ սիրուն բաներ են , բայց ատենէ դուրս անոնք վայելել ուղողը զանոնք կը փճացընէ , ու փուճ տեղը անոնց գէշութեանը վրայ գանգատ կ'ընէ . տըտիպ են՝ թթու են , վասն զի դեռ հասունցած չեն : « Ամէն անուշ խաղող՝ առաջ ազոխ էր . ամէն գեղեցիկ վարդ՝ առաջ չոր փայտ էր . ամէն ծաղկած դաշտ՝ առաջ անապատ էր .

աշխարհքս սասնկ կ'երթայ , ու անոր համար կը դիմանայ , կ'ըսէ իմաստունին մէկը : Եւ յիրաւի . տհասութիւնը և կամաց կամաց հասուննալը աղէկ նշան է՝ թէ պտուղներու և թէ պատանիներու վրայ . իսկ չափազանց շուտով հասուննալը թէ անոնց և թէ ասոնց վտանգաւոր է : Ետենէ դուրս և կամ բռնի հասած պտուղը շուտ կը փտտի կը փճանայ . սասնկ ալ ժամանակէն առաջ հասունութի ծախող պատանին , քիչ ուսմամբ ու կըթուլութեամբ շատ պարծեցող պատանին շուտով ալ խաղք կ'ըլլայ : Գեղեցիկ ու յարմար օրինակ է աս բանիս՝ Խալալացոյց Մարիոսթոյ բանաստեղծին առակը , որ կ'ըսէ .

Ետենով դըդու մը կար
Տանծի ծառին դըրացի .

Վանի մը ամսըւան մէջ

Եյնպէս շուտով կը բացուի

Կ'ուռճանայ կը բարձրանայ ,

Որ ծառին ծայր կը հասնի :

Տանծենին առաւօտանց

Խորունկ քընէն արթնցաւ ,

Դըդմենին վըրան ելած

Տեսնելով շատ զարմացաւ .

« Ո՛վ ես դուն , ըսաւ անոր .

Իմ վըրաս ուսկից եկար .

Ո՛ր էիր , կամ թէ ընտո՞ր

Եյնպէս շուտ գըլուխս ելար , »

— Իմ անունս կ'ըսուի դըդու մ .

Վու քովդ էի տընկըլած .

Դեռ իրեք ամիս չըկայ ,

Տես ինչուան ո՛ւր եմ հասած , »

Նառն ըսաւ . « Հոս հասնելու

Ես քսան տարի յոգներ եմ ,

Ինչ հովեր՝ ինչ ցրտերու

Վաջութեամբ դիմացեր եմ :

Բայց գիտցիր . դուն որ շուտով

Ինչուան երկինք ես ելեր ,

Եյնպէս շուտ ալ կը չորնաս ,

Ու չես տեսներ լաւ օրեր , » :